

**«Եվրոպա» պարբերականը Դանուբյան իշխանություններում
1848 թ. ազգային շարժման մասին**

Քերնեցյան Արման

*Հանգուցային բառեր. Մոլդովա, Վալախիա, ապստամբություն,
ազատություն, անկախություն, պայքար, պարտություն*

Ներածություն

Դանուբյան իշխանություններ Վալախիան և Մոլդովան, որոնք շուրջ երեք հարյուրամյակ գտնվում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ, 1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակից ոգևորված, պայքարի դուրս եկան հանուն ազատության և անկախության: Ապստամբությունը սկզբում բռնկվեց Մոլդովայում, որտեղ հասարակության տարբեր շերտերից կազմված ներկայացուցչական ժողովը բողոքի հանրագիր հղեց տեղական իշխանությանը [6, 22]:

1848 թ. Դանուբյան իշխանություններ Մոլդովայում և Վալախիայում ծավալված ազգային շարժման նկատմամբ անտարբեր չմնաց ժամանակի հայ պարբերական մամուլը: Վիեննայի Մխիթարյան միաբանների «Եվրոպա» շաբաթաթերթը անթաքույց հետաքրքրություն ցուցաբերեց այդտեղ ծավալվող իրադարձությունների նկատմամբ: Դանուբյան իշխանությունների ազգային շարժման մասին թերթի դիրքորոշումը բացահայտելը կարևոր է հայ հասարակական մտքի և հայ պարբերական մամուլի պատմության համար:

Ազգային շարժումը Մոլդովայում

«Եվրոպան» Մոլդովայում «պատահած վերջին դեպքերու» կապակցությամբ կարծիք է հայտնում, որ դրանց դրդապատճառ հանդիսանում են 1848 թ. եվրոպական մի շարք երկրներում ընթացող հեղափոխությունները: Պարբերականի համոզմամբ՝ հատկապես Ֆրանսիայում «փետրուարի մեջ եղած յեղափոխութիւնը հոստեղացիներուն վրայ մեծ ազդեցութիւն ըրած էր»: Մոլդովացիներին առանձնապես ոգևորում է Եվրոպայում տիրող մթնոլորտը, որը հագեցած է «ազատութեան սիրով»: Նրանք, տեսնելով, որ «Ավստրիան սահմանադրութիւն տուաւ այն ստենը ավելի եւս բորբոքեցան, վասն զի կը տեսնեին, որ իրենց սահմանակից-

ներն ու Պուգովինայի մեջ բնակող իրենց ազգակից եղբայրներ նոյն ազատություն կվայելեն, որ անոր համար կը բաղձային, որ իրենց մեջն ալ քանի մը նորոգութիւններ ըլլան» [1]:

Ընդգծելով Մոլոդովայում սկիզբ առած շարժման ազտագրական և սահմանադրական բնույթը՝ «Եվրոպան» շարունակում է հավաստի տեղեկություններ հաղորդել պայքարի սկզբնավորման և դրա ընթացքի վերաբերյալ: Անդրադառնալով մարտի 27-ին «Պետերբուրգ» հյուրանոցում ընդդիմության հրավիրած հանրահավաքին՝ «Եվրոպան» հայտնում է, որ դրան մասնակցում էին «երկրի ամեն կողմերեն եկած ազնուականներ» [1]: «Եվրոպան» ճիշտ է ներկայացնում հավաքի ընթացում կազմված հանրագրի բովանդակությունը և էությունը, որում ներկայացված պահանջներն, ըստ թերթի, «նոր բաներ չէին, որ չափ եղած օրենքներին ճիշտ պահպանութիւնը» [1]: Վիեննահայ պարբերականը սկզբնաղբյուրի հավակնող ճշգրտությամբ նկարագրում է Յասսիում տեղի ունեցած հետագա իրադարձությունները [11, 142-143, 8, 359-360]:

«Եվրոպան» ոչ միայն անկողմնակալ դիրքերից է լուսաբանում Մոլոդովայում սկսված համաժողովրդական շարժումը, այլև ճիշտ է ընկալում դրա բռնկման շարժառիթներն ու նպատակադրումները: Պարբերականը Դանուբյան իշխանություններում տեղի ունեցածը, ըստ էության, դիտարկում է 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխությունների համատեքստում՝ ընդունելով այն որպես դրանց բաղկացուցիչ մաս:

Շարժման ղեկավարների ու ակտիվիստների մի մասին ձերբակալելով, իսկ մյուսներին փախուստի մատնելով՝ Մոլոդովայի հոսպոդար Միխալ Ստուրձան շտապեց տոնել հաղթանակը: Նա Մոլոդովայի «սիրելի քաղաքացիներին» ուղղված կոչ հրապարակեց, որում հավաստիացնում էր, որ «խռովություններն ու դավադրությունները» ճնշված են, և երկրամասում վերականգնված է «կարգուկանոնը» [6, 25]: Իրականում, սակայն, շարժումը նոր թափով ծավալվեց հատկապես գյուղական շրջաններում: Տագնապած Մ. Ստուրձան դիմեց Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ին: Վերջինս չհապաղեց Դանուբյան իշխանություններ գորք մտցնելու և այդպիսով դրանք ամբողջությամբ ռազմակալելու պատեհությունն օգտագործելուց: Նիկոլայ I-ը, չբավարարվելով Մոլոդովայի սահմանազլխին ռուսական զորքերի տեղակայմամբ, 1848 թ. ապրիլին արտակարգ լիազորություններով դանուբյան իշխանություններ ուղարկեց գեներալ Ալեքսանդր Դյուխամելին, որն աչքի էր ընկել դեռևս 1831 թ.

լեհական ազգային ազատագրական պայքարը ճնշող ռուսական բանակի կազմում՝ պարզևատրվելով «Արիության համար» մակագրված ոսկե սրով [9, 73]: Յարական գեներալն այս տարածքներում, ելնելով իրավիճակից, ընդհուպ զինված ուժեր մտցնելու իրավասություն ուներ:

«Եվրոպան» ակնհայտորեն չի ողջունում ռուսական զորքերի ներկայության հեռանկարը Դանուբյան իշխանություններում: Թերթը ճգնաժամի խորացման համար սխալմամբ մեղադրում է միայն հոսպոդար Մ. Ստուր-ձային, քանի որ վերջինս, «եթե խոհեմությամբ մի քիչ զիջանելու լիներ, ինքն ալ ասանկ անհանգստութեան եւ ատելութեան մեջ չէր ընկնի» [1]:

Միխայրյան միաբանության պարբերականը կարծում է, որ ժողովրդի «դառնութիւնն ու ատելութիւնը» ուղղված է միայն Մ. Ստուրձայի անձի դեմ՝ չհասկանալով, թե հոսպոդարի նկատմամբ եղած դժգոհությունները ընդամենը առիթ էին և ոչ թե պատճառ մոլորվացիների հասունացած գայրույթի պոռթկման համար:

Երբ ազատագրական շարժումն ընդգրկեց նաև Վալախիան, իշխան Դյուխամելը որոշեց, որ ժամանակն է դիմելու վճռական գործողությունների: Յարական զորքերի ներկայությունը Մոլդովայում բացասական ազդեցություն ունեցավ ազգային շարժման հետագա ընդարձակման և ծավալման վրա:

Ազգային շարժումը Վալախիայում

Վալախիայում ազգային ազատագրական շարժումը բռնկվեց ավելի ուշ, սակայն այստեղ այն առավել կազմակերպված բնույթ ստացավ: Բուխարեստի ընդդիմադիրներն ավելի միասնական ու վճռական էին, քան Յասսիի իրենց համախոհները: Վալախիայում ազգային շարժումը ծնող ներքին դրդապատճառները գրեթե նույնն էին, ինչ Մոլդովայում: Շարժումն առաջինն սկսվեց Օլտենիայում, որտեղ գյուղացիության վիճակն առանձնապես ծանր էր, բացի դրանից՝ Փոքր Վալախիան 1821 թ. ապստամբության կենտրոնն էր եղել, և այստեղ դեռ վառ էին Թուդոր Վլադիմիրեսկուի գլխավորած պայքարի հիշողությունները: Այստեղ նույնպես բողոքի հանրագիր կազմվեց և ուղարկվեց տեղական իշխանությանը, որը գլխավորում էր հոսպոդար Գեորգե Բիբեսկուն: Վերջինս, ահաբեկված համաժողովրդական հուժկու ալիքից, ստիպված էր ճանաչել ձևավորված ժամանակավոր կառավարությունը [7, 282]:

«Եվրոպան», վալախական ազգային շարժման դրդապատճառները

բացահայտելուց բացի, ներկայացնում է ապստամբների ներկայացրած քաղաքական պահանջների և նրանց հետապնդած նպատակների բովանդակությունը: Թերթը ճիշտ է ներկայացնում վալախների քաղաքական պահանջները, որի համաձայն՝ պետք է երկրում հաստատել «սահմանադրութիւն», որը կերաշխավորի բոլոր քաղաքացիների «ընդարձակ ազատություններ»: Պարբերականը, սակայն, ընդգծում է, որ, այս ամենով հանդերձ, վալախներն իրենց պատրաստակամությունն են հավաստում «Բարձր Դրանը հպատակ» մնալու մասին [2]: Այս հարցում պարբերականը չի սխալվում, քանի որ, իսկապես, Իսլազյան փաստաթղթում Վալախիայի քաղաքական կարգավիճակը նախատեսում էր ինքնավար պետություն Օսմանյան կայսրության կազմում [10, 219-220]:

Մխիթարյան միաբանության պարբերականն այնուհետև Բուխարեստից ստացված լուրերի հիման վրա հավաստի տեղեկություններ է տալիս Վալախիայում սկիզբ առած ապստամբական շարժման ընթացքի մասին: Թերթը իրավացիորեն գրում է, որ հոսպոդար Գ. Բիբեսկուն, ընկրկելով ընդդիմադիր ուժերի ճնշման առջև, զիջել էր և «սահմանադրութիւնը տուեր է»: «Եվրոպան» դրանից եզրակացնում է, որ փաստորեն Գ. Բիբեսկուն Ռուսաստանի «հոգաբարձութենե ազատուելուն հավաներ է»: Սակայն երբ Գ. Բիբեսկուն այս զիջումներն անելուց հետո «միտքը դրել է» հեռանալ Բուխարեստից, թերթի հավաստամբ, ընդդիմադիրները նրան ստիպել են «հրաժարման թուղթ» ստորագրել, նոր հեռանալ: Նման իրավիճակում, «Եվրոպայի» դիտարկմամբ, Վալախիայի ամբողջ իշխանությունը անցավ «առժամանակեա կառավարութեան ձեռքը»: Թերթը կարևորում է, որ տեղի ունեցածի պատճառով «խաղաղութիւնը չվրդովկեցավ» [3]:

«Եվրոպան», անկողմանակալ դիրքերից ներկայացնելով վալախական ապստամբությունը, անհանգստություն է հայտնում Ռուսաստանի հետագա գործողությունների կապակցությամբ, քանզի «այդ երկիր արդեն բողոքած է» տեղի ունեցած հեղափոխության դեմ և նպատակ ունի գորքեր մտցնել Վալախիա: Իրադարձությունների նմանօրինակ զարգացման պարագայում թերթը հույս է հայտնում, որ «Անգղիան և Գաղղիան դեմ հանդես կըգան» [3]: Փաստորեն վիեննահայ պարբերականը, դեմ արտահայտվելով Դանուբյան իշխանություններ ռուսական զորքերի ներխուժմանը, հանդես է գալիս իշխանությունների գործերին Անգլիայի ու Ֆրանսիայի միջամտության օգտին: Ուշագրավ է, որ թերթը Մոլդովային ու

Վալախիային վերաբերող այս լուրերը զետեղել է միջազգային իրադարձությունների շարքում՝ փաստելով դրանց կարևորությունը:

Վալախիայում ձևավորված ժամանակավոր կառավարության մեջ ի հայտ եկան խորը տարաձայնություններ պայքարի հետագա մարտավարության հարցում: Դրան, հատկապես, նպաստեցին տարածվող լուրերը ռուսական զորքերի երկրամաս շարժվելու մասին: Ի վերջո, ապստամբական կառավարությունը վճռեց թողնել մայրաքաղաքը և քաշվել լեռները [7, 37-38]:

Սուլեյման փաշայի հրամանատարությամբ Վալախիա մտավ 20 հազարանոց օսմանյան բանակը: Ջորքերը Դանուբյան իշխանություններ մտցնելու սուլթանի որոշումը համաձայնեցված էր ռուսական կողմի հետ: Բարձր Դուռը, առավել վտանգավոր համարելով Դանուբյան իշխանություններում սկիզբ առած ազգային շարժումները, նախընտրեց մի կողմ դնել ցարական կառավարության հետ ունեցած մշտական հակասությունները և համագործակցել նրա հետ: Սուլթան Աբդուլ Մեջիդը Վալախիա զորքեր մտցնելու որոշումն արագացրեց հատկապես այն ժամանակ, երբ Ռուսաստանը զորքեր տեղակայեց, Մոլդովայում:

Վալախիայի կառավարության անդամների մեծամասնությունը հակված էր համագործակցելու թուրքերի հետ՝ մտածելով, որ դրանով վերջիններիս կհակադրեն ռուսներին: Վալախների մոտ շարունակում էր գերիշխել այն համոզմունքը, որ իրենց ազատության ու անկախության գլխավոր խոչընդոտը ցարական Ռուսաստանն է: Նրանք օսմանանյան սուլթանին ցարի համեմատությամբ սկսեցին դիտել որպես չարյաց փոքրագույնի, հատկապես այն բանից հետո, երբ Ֆրանսիայից սպասված օգնությունն այդպես էլ չստացվեց:

Թուրքամետ կողմնորոշման հակվածությունը խիստ բացասական ազդեցություն թողեց ազգային շարժման հետագա ելքի վրա, քանի որ վալախները ստիպված էին ազատագրական պայքարի իրենց նպատակները համապատասխանեցնել Բարձր Դռան կայսերապետական շահերին: Այս հարցում ճակատագրական սխալը, որը կատարեցին վալախները, իրենց քաղաքական ծրագրերից Դանուբյան երկու իշխանությունների միավորման պահանջի հանումն էր:

Անշուշտ ժամանակավոր կառավարության բոլոր անդամներն էին կողմ այս քաղաքականությանը, սակայն առկա տարաձայնություններն էլ ավելի էին թուլացնում շարժումը:

«Եվրոպան», Վալախիայի ժամանակավոր կառավարության ներսում տիրող իրավիճակին անդրադառնալով, գրում է, որ «շփոթութեան մէջ է»: Թերթը կարևոր տեղեկություն է հաղորդում այն մասին, որ այդ կառավարությունը «աղերսագիր է» հղել Պետերբուրգ՝ խնդրելով Նիկոլայ I ցարին զերծ մնալ Դանուբյան իշխանություններում զինված ուժեր տեղակայելու մտադրությունից, քանզի իրենց նախաձեռնած «առ վերջին յեղափոխութիւնը բուն ժողովրդի կամքէն առաջ եկած է, որն որ մինչեւ հիմա միշտ ճնշուած էր, ուստի եւ կայսեր մեծանձնութիւնից պիտի խնդրեն, որ եղածներուն հավանի, ապա թէ ոչ բոլոր Եւրոպայի օգնութիւնն ու պաշտպանութիւնը պիտի խնդրեն» [3]:

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը միաձույլ կրոնական մարմին էր, ուստի պատահական չէ, որ նրանց կրոնական մարմինը 1848-1849 թթ. եվրոպական հեղափոխություններում և ազգային ազատագրական շարժումներում կարևորում էր նաև կրոնական հարցերը: Թերթն ամբողջությամբ հրապարակում է Ֆուադ փաշայի նամակն՝ ուղղված Վալախիայի միտրոպոլիտին: Նրան դիմելով որպես «խաղաղութեան սպասավորի»՝ փաշան կոչ էր անում, որ նա իր հովված հոտի «մոլորեալներին» դարձի բերի և «հնազանդուի սուլթանի կամքին»: Հակառակ դեպքում Ֆուադ փաշան նրանց հիշեցնում էր այդ ամենը ուժի գործադրմամբ կատարելու իր իրավասությունների ու հնարավորությունների մասին [4]:

1848 թ. օգոստոսի 31-ին Բուխարեստում Ֆուադ փաշան ընդունեց միայն բոյարների այն խմբին, ովքեր ազգային շարժմանը որևէ մասնակցություն չէին ցուցաբերել, իսկ վալախական գործող կառավարության անդամներին ընդհանրապես ուշադրության չարժանացրեց: Սա ժողովրդի կողմից բուռն զայրույթով ընդունվեց: Մեպտեմբերի 6-ին Բուխարեստի բնակչությունը քաղաքում բողոքի զանգվածային ցույց կազմակերպեց, որի մասնակիցները ցուցադրաբար այրեցին Վալախիայի Օրգանական կանոնակարգը [6, 52]:

Հավաստի մանրամասներ հաղորդելով այս մասին՝ «Եվրոպան» գրում է, որ բազմությունը դիակառքի վրա դրված «առաջին օրինացն Ոսկեգիրքը եւ իշխանաբանութիւնը»¹ սգո երաժշտության հնչյունների

¹ Խոսքը վերաբերում է Օրգանական կանոնակարգի և բոյարների իրավունքների գրքին:

ներքո հանդիսավորությամբ նետեց կրակը [4]:

Բողոքի այս ցուցադրական ելույթն առաջին հերթին ուղղված էր Օսմանյան կառավարության քաղաքականության դեմ, որը ցանկանում էր վերականգնել Վալախիայի նախկին իրավակարգը, իսկ այն ամրագրված էր Օրգանական կանոնակարգով:

Ջայրացած վալախների այս հանդուգն ելույթից՝ Ֆուադ փաշան իր զինվորական շարասյունները ուղղեց դեպի Բուխարեստ: Սակայն քաղաք մտնող կամրջի վրա օսմանյան զինվորները բախվեցին բազմահազար ցուցարարներից կազմված պատին: Նրանք փորձեցին առանց կրակ բացելու ճեղքել վալախների կազմած կենդանու շղթան և արդյունքում մարդկանց ոտքի կոխան անելով՝ սկսեցին առաջ շարժվել: Հաղթահարելով ցուցարարների պատնեշը՝ թուրքական բանակը ներխուժեց քաղաք, որտեղ, սակայն, զորանոցի մոտ զինված բախում ունեցավ ապստամբների ջոկատների հետ [6, 53]:

Չնայած Բուխարեստն ամբողջությամբ ռազմակալվեց ռուսական և թուրքական բանակների կողմից, այնուամենայնիվ Վալախիայում համաժողովրդական դիմադրությունն ամբողջությամբ ճնշված չէր: Վալախ գեներալ Գեորգե Մագերուն, իր շուրջը համախմբելով կանոնավոր և անկանոն ջոկատներից բաղկացած 30 հազարանոց մի բանակ, ամրացել էր Օլտենիայի Ռուկերե բնակավայրի մոտ: Ի պատասխան իրեն ուղղված անձնատուր լինելու կոչերին՝ նա հաստատել էր պայքարը շարունակելու իր վճռականության մասին՝ հայտարարելով, որ ավելի շուտ կմեռնի, քան իրեն կմատնի ստրկության [6, 3]:

«Եվրոպան» Ֆոքշանից ստացած լուրերով ներկայացնում է Բուխարեստում թուրքական հարձակման հետևանքով վալախ ապստամբների անբարեհույս վիճակը: «Մինչև հիմա եղած տեղապահութիւնը վերցուեցավ,- գրում է թերթը,- վալաք գորքը ցրուեցավ եւ նոր տեղապահներ դրուեցան» [5]: Թերթի դիտարկմամբ՝ Վալախիայում ապստամբությունը մարեց, երբ «ռուսի զօրապետ Լիտերսը յուր 30000 զորքովը Վալաքիա մտեր է ու թուղթ մը հաներ է, որ սուլթանին ու ռուսին կայսեր միաբան որոշումներուն հնազանդին» [5]:

Այսպիսով ռազմական միջամտության արդյունքում ճնշվեց Դանուբյան իշխանությունների ազգային-ազատագրական շարժումը, որը, սակայն, հող նախապատրաստեց մեկ տասնամյակ անց ազգային միավորման շարժումը հաղթական ավարտին հասցնելու համար:

Եզրակացություն

Թերթը անկողմնակալ և հավաստի տեղեկություններ է հաղորդում Դանուբյան իշխանություններում սկիզբ առած շարժման դրդապատճառների և առաջադրված նպատակների մասին: «Եվրոպա» կաշկանդվածություն չուներ ռումին ժողովրդի հակասումանյան պայքարի անաչառ ու անկողմնակալ լուսաբանման առումով, ուստի ճիշտ է ներկայացնում շարժման և՛ շարժառիթը, և՛ նպատակը: Պարբերականի խմբագիրները հասկանում էին, որ մոլորվացիների և վալախների պայքարը կրում է ազգային-ազատագրական բնույթ և հավատարիմ մնալով իրենց որդեգրած ուղեգծին՝ եվրոպական երկրներում սկիզբ առած բոլոր շարժումները լուսաբանում էին անկողմնակալ դիրքերից:

Գրականության ցանկ

1. «Եվրոպա», 1848, 6 հունիսի, թիվ 23:
2. «Եվրոպա», 1848, 4 հուլիսի, թիվ 27:
3. «Եվրոպա», 1848, 25 հուլիսի, թիվ 30:
4. «Եվրոպա», 1848, 10 հոկտեմբերի, թիվ 41:
5. «Եվրոպա», 1848, 17 հոկտեմբերի, թիվ 42:
6. История Румынии 1848-1917, Ред. колл. Виноградов В.Н. и др., М., 1971
7. Краткая история Румынии, Отв. Ред. Виноградов В.М., М., 1987
8. Революции 1848-1849, т. II, Под. ред. Потемкина Ф.В. и Молока А. И., М. 1952
9. Шилов Д.Н., Кузьмин А.Ю., Члены Государственного совета Российской империи 1801-1906, СПб, 2007
10. Международные отношения на Балканах 1815-1830 гг., Отв. Ред. В. Н. Виноградов, М., 1983
11. Georgescu V., The Romanian A History, Ohio State University Press Columbus, 1991.

Периодическое издание "Европа" о национальном движении при Дунайских княжествах в 1848 г.

Бернецян Арман

Резюме

Ключевые слова: *Молдова, Валахия, восстание, свобода, независимость, борьба, поражение*

В 1848 году армянская периодика того времени не осталась равнодушной к национальному движению дунайских властей в Молдавии и Валахии. Ежедневная газета венских Мхитаристов "Европа" проявила нескрываемый интерес к происходящим там событиям. Газета сообщает беспристрастную и достоверную информацию о мотивах и поставленных целях движения, начавшихся в Дунайских княжествах. "Европа" не имела ограничений в плане беспристрастного и объективного освещения антиосманской борьбы румынского народа, поэтому правильно представляла мотив и цель движения.

Газета сообщает достоверную информацию о требованиях, предъявленных участниками движения, которые, помимо социального, были также политическими. Повстанцы предлагали облегчить феодальные повинности, образовать войска национальной гвардии, установить равноправие, улучшить дело образования, установить свободу прессы, провести свободные, справедливые выборы.

В ответ на это властелин Молдавии, применив силу, арестовал наиболее активных деятелей движения. Однако движение этим не прекратилось, наоборот, развернулось с новым размахом. Российский император Николай I немедленно ввел войска в Молдову. "Европа" подробно освещает начавшееся в Валахии национальное движение, представляя довольно достоверные новости. События в дунайских княжествах освещаются с беспристрастных позиций, но заметно, что их газета явно выступает против вторжения российских войск в Валахию. Газета констатирует тот факт, что начавшееся в результате внешнего вмешательства национальное движение в Дунайских княжествах погасло.